

Նվիրում եմ հորս՝

Արմենակ Կարապետյանի հիշատակին

Ներկայումս մարդկությունն ապրում է բարդ ու հակասական ժամանակաշրջան. տարերային աղետներ, կլիմայի փոփոխություններ, տնտեսական ճգնաժամներ, պատերազմներ, սով, համաճարակներ, ժողովրդագրական տեղաշարժեր և այլն: Պատկերն էլ ավելի է ահազնանում օրեցօր խորացող էկոլոգիական ճգնաժամի պատճառով: Այս ամենը մարդկությանը մոտեցնում է մի սահմանագծի, որից այն կողմ զարգացումներն անկանխատեսելի են: Այս իրավիճակը չի կարող անտարեր թողնել շատ թե քիչ մտածող անհատին, որը պատասխանատվություն է զգում իր շրջապատի, իր քաղաքի, իր երկրի և, վերջապես, Երկիր մոլորակի ապագայի համար: Ներկայիս մարտահրավերներն այդ ապագայի նկատմամբ լավատեսություն չեն ներշնչում, ինչն էլ ստիպում է ստեղծված իրավիճակից դրւու գալու ելքեր փնտրել:

Պետական տարբեր կառույցներ, միջազգային կազմակերպություններ օրենքներ են գրում, պատժամիջոցներ են սահմանում, պատասխանատվություն են պահանջում շրջակա միջավայրի աղտոտման, նրա հավասարակշռության խախտման, բնության կենսաբազմազանության դեմ ուժնձգություններ կատարելու համար: Սակայն մարդկանց շարունակում է առաջնորդել նրանց հոգեբանության մեջ գերիշխող սպառողի կարծրատիպը, ամեն գնով հարստանալու ձգտումը, բնության նկատմամբ անխիղճ վերաբերմունքը: Ցավալի է, բայց նման զարգացումների միտումները փոխվելու նշաններ չեն ցուցաբերում:

Կյանքը ցույց է տալիս, որ էկոլոգիական աղետի կանխման համար ոչ մի օրենք, տուգանք, պատիժ չի օգնի, քանի որ այդ աղետի արմատներն ավելի խորն են, քան մենք կարող ենք պատկերացնել: Դա հասարակության յուրաքանչյուր անդամի գիտակցության, նրա հոգեբանության մեջ է: Սարդկանց թվում է, որ շրջապատող աշխարհը մեզանից կախված չէ, որ այն գոյություն ունի ինքն իր համար, և մեր գործը միայն նրա օրինաչափությունները հայտնաբերելն ու ուսումնասիրելն է հետագայում մեր շահերին ծառայեցնելու համար: Այդպիսի մտածողության պատճառներից, թերևս, ամենազիստավորը մեզանում էկոլոգիական դաստիարակության պակասն է:

Այս իրատարակությունը միտված է այդ պակասը որոշ չափով լրացնելուն:

Կենսաբանական տարբեր մակարդակներում կյանքի դրսևորումների դիտարկումները, բնության, հասարակության, միջավայրի տարբեր երևույթների համադրումը և դրանց վերլուծությունը պատմության, փիլիսոփայության տեսանկյունից հնարավորություն տվեցին որոշ եզրակացություններ անել՝ կապ ստեղծելով անցյալի ու ներկայի, կյանքի ֆիզիկական գոյության ու հոգևոր էռլրյան միջև: Դրա արդյունքում ստացված ամբողջական գաղափարը մեծ հետաքրքրությամբ ընդունվեց ուսանող երիտասարդների և ավելի հասուն մարդկանց կողմից: Այս, ինչը, ըստ իս, խիստ ակնհայտ է, նորություն էր շատերի համար, որոնք էլ ինձ հորդորեցին այդ ամենի մասին բարձրաձայնել:

Այդ առիթով ուզում եմ իմ երախտագիտությունն արտահայտել բոլոր այն մարդկանց, ովքեր նպաստեցին այս գրքի ստեղծմանը:

Խորին շնորհակալություն եմ հայտնում պրոֆեսոր Կ. Դանիելյանին, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ռ. Շովիանիսիանին, դոցենտ Մ. Նադիրյանին և դոցենտ Է. Զաքարյանին, ովքեր խորհուրդներով ու դիտողություններով օգնեցին ներկայացվող նյութն ավելի հետաքրքիր դարձնել:

Ուզում են ավելացնել, որ շատ ուրախ կլինեմ, եթե այս աշխատանքը մի փոքր նպաստի դաստիարակելու այնպիսի սերունդ, որը **ՄԱՅՐ ԲՆՈՒԹՅՈՒՆ, ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔ** հասկացությունները կընկալի ու կընդունի մեծագույն հարգանքով ու երկյուղաձությամբ և պատասխանատվություն կզգա այդ արժեքները պահպանելու ու եկող սերունդներին փոխանցելու համար:

Մ. Կարապետյան



Բովանդակություն